

~~9112~~
753

434

712

A²⁰⁰⁹ 680.

Հայաստան
2091-38

Հայ
712


Մեջանոս.
A680

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԷՐ

Կաթնախ

ԿԱՐՄԵՆ ՍԻՂԱՅԻՑ

1010
41367



1563

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
1899

5800

8




Մ Ա Յ Ր Ա Կ Ա Ն Ս Է Ր

Մուգավիայի արևմտեան մասում, Պիետրո և Փոլ՝
տենդինս քաղաքների միջով, հոսում է մի գետակ:
Գետակի մօտ գտնուող լեռան այս ու այն կողմը,
ցիր ու ցան, ընկած են հին բերդի աւերակներ:
Բերդը կոչում էր Նիեանց: Աւաղ հին բերդի շա
քիչ հետքերն են մնացել այժմս: Լեռան ստորոտում
գտնուող նորակառոյց քաղաքը համարեա ամբող
ջապէս շինուած է նախկին գոռոզ բերդի քարերից:

Հին ժամանակներում այդ բերդը մեծ հռչակ էր
վայելում: Թէ մօտիկ և թէ հեռու տեղերում յայտ
նի էր Նիեանց բերդը և անմատչելի համարւում:
Այն ժամանակ բերդին տիրում էր Մուգավիայի հզօր
իշխան Ստեփանը: Նա յիսունից աւելի պատերազմ
ներում յաղթութիւն էր տարել, և ամէն անգամ
յաղթական կռուից վերադառնալով մի եկեղեցի կա
ռուցել, իբրև իւր գոհութեան արտայայտութիւն:

Доволено цензурою. С.-Петербургъ, 18 Ноября 1898 года.



712-2009

18709

Մի անգամ տաճիկները դէմ տեղի ունեցաւ տաք ու կատաղի կռիւ: Ամբոցի բարձրաբերձ պարիսպներից կարելի էր լաւ դիտել, թէ ի՞նչ ընթացք է ստանում մարտը... Սկզբում յաղթութիւնը կարծես թշնամու կողմը լինէր, և ըստ երեւոյթին բազըր խուսափում էր Մուլգավիայի իշխանից:

Բերդում ֆնացել էին երկու կին. Ստեփանի ամուսինը և մայրը: Չափել իշխանուհին կանգնած դիտում էր. նորա երեսը, շեկազոյն մազերով պատած վարդազոյն թշերը, թրջուել էին արտասուքներից: Նա մերթ դէպի հովիտն էր զցում իւր հայեացքը, մերթ ահ ու սարսափով երեսը ծածկոցով փակում, որպէսզի չտեսնէ հեռում երեւցող սեսարանը: Այլ կերպ էր պահում իրեն միւս կինը: Հպարտ կանգնած էր նա ջահել իշխանուհու մօտ, նայում էր հեռու, անձայն ու անշարժ, ոչ ուտելն էր յիշում, ոչ խմելը, միայն աչքերը յառել էր միեւնոյն տեղին և նայում ապշած: Երբեք իւր զեղեցիկ ձեռքը զնում էր հարսի ուսին և մի բանի խօսք ասելով ուզում էր հանդստացնել, ամուր ու զուարթ պահել ջահել կնոջը. նորա ձայնը խրոխտ ու պարզ էր հնչում: Սակայն նորան, Ստեփանի մօրը, չէր յաջողում հանդստացնել յուսահատ հարսին:

Հասաւ վերջապէս սարսափելի բոսկն. թշնամիները յարձակուել էին Ստեփանի զօրքի վերայ և յաղթութիւնը նրանց կողմն էր: Բոլոր միւս զգացումները տեղի տուին սարսափին: Թշնամիները համախմբուել էին, որպէսզի վերջին հարուածը տան. այնպէս որ Ստեփանը մտածեց շտապով պաշտպանողական զիրք բռնել...

— Օհ, մայրի՛կ, մայրի՛կ, նոքա կը սպանեն Ստեփանին:

— Մինչև երեկոյ, նա յաղթանակ տարած կը վերադառնայ մեզ մօտ:

Այնպիսի եղանակով, այնպիսի անընկճելի համազօրական ձայնով արտասանեց մայրն այս խօսքերը, որ ջահել իշխանուհու աչքերից թափուող արտասուքները կարծես սառեցին:

Յանկարծ լուռեց չափ դցած ձիու շտապ տրոփիւն, և բերդի դռները ամուր բազխեցին:

— Իա Ստեփանն է, ես այդ գիտեմ: վաղեմ դուռը բաց անեմ, ներս թողնեմ նորան...

Մօր ձեռքի հրամայական նշանը, յետ պահել ջահել իշխանուհուն, իսկ մայրը դանդաղ, մտազբաղ քայլերով իջաւ սանդուխտից:

— Ո՞վ է բաղխում այդտեղ—հարցրեց նա առանց դուռը բաց անելու:

— Ստեփաննը, քո որդի՛ն...

— Իմ որդի՛ն. անձանձօթ, ո՞վ ես դու, որ մտածել ես այդպիսի հնարքով մտնել հիանալի որդուս բնակավայրը:

— Մայր իմ, թող ինձ. այդ ես եմ, քո որդին, ես ջարդուած եմ: տաճիկներն ընկել են յեանկիցս... Արիւնը ծորում է այրող վերքերիցս...

— Ո՛չ, իմ որդին այդպէս չե՛ կարող խօսել. դու ինձ անձանձօթ ես. քեզ չեմ ճանաչում: Իմ որդին յաղթուած իւր տարած կրվերագառնայ. իմ որդին հեռօ՛ւ, հեռօ՛ւ է այստեղից. նա յաղթական ձեռքով ոչնչացնում է հայրենիքի թշնամիներին: Իսկ դո՛ւ, երիտասարդ անձանձօթ, որ ցանկանում ես, սիրտս տանջող խիստ ցաւով հաւատացնել ինձ, թէ դու իմ որդին ես, իմացած եղիւր, որ քեզ ներս չեմ թողնի ամբողջ, որովհետեւ չկարողացար գալ ինձ մօտ յաղթուած իւր տարած. հեռացի՛ր, գնա՛... Գնա՛ և ձեռք բեր կռուի դաշտում հերոսական մահ. ահա այն ժամանակ ես կը լինեմ քո մայրը և կ'ողողեմ որդուս գերեզմանը մայրական արտասուքներով...

Ձահել իշխանուհին ծնկաչոք ընկաւ Ստեփանի մօր առաջ. ուզում էր փորձել, գոնէ իւր արցունքներով համոզել նորան, բայց մօր ձեռքի վրձնական շարժումը հրամայեց լռել:

Իշխան Ստեփանն ամօթից ու ցաւից ընկձուած, զլուխը խոնարհեցրեց. բայց նա շուտով յթափուեց, ճակատից դէն արեց իր խիտ մազերը, վերցրեց փողն և այնպիսի ուժով փչեց, որ նրա ձայնեղ կոչը զիշերային մթուածեան մէջ կարող էր նոյն իսկ մեռածներին յարուծիւն տալ, և նրանց ստիպել իշխանի հետ ընթանալ դէպի կռուի դաշտը...

Մուրավիայի փախած զօրքը միանգամից հաւաքուեց առաջնորդ իշխանի շուրջը: Զինուորները շարուեցին կարգով. զօրքով շրջապատուած իշխանը հողմի արագութեամբ գրոհ տուեց, իջաւ սարից և յարձակուեց իրեն բնաւ չսպասող թշնամիների վրայ, որոնք կարծելով թէ արդէն յաղթել են, հանդիստ նիրհում էին:

Իշխանն իւր զօրքով երկար ժամանակ հալածում էր թշնամիներին, այնպէս որ վերջինները չկարողացան ի մի հաւաքուել և դիմադրել Մուրավիայի զօրքին: Պատերազմի շփոթն ու աղմուկը աւելի և աւելի էր տարածուում: Քամին տանում էր յաղթուածեան աղաղակների ձայնը դէպի բերդ, ուր սրտատրոփ սպասում էին երկու կին:

Ահա իշխան Ստեփանը հնչեց փողն և այս անգամ լսուեցին յաղթուածեան ուրախ ու զուարթ ձայներ: Յաղթուածին տանողները յեա դարձան

զէպի բերդ, որի պարիսպների առամնաձև ծայրերը
կորչում էին հեռու աստղաշաղ հորիզոնում: Նոյն
ժամին ամրոցի ներսը ամեն կողմից բազմաթիւ
կրակներ էին վառուում: ներսում զանուկները յաղ-
թութիւն տանողներին փառաւոր ընդունելու պատ-
րաստութեամբ էին զբաղուած:

Ահա բլրի ստորոտում լուեց ձիու արոփիւն:
Իշխանը զորքի գլուխն անցած առաջ էր ընթա-
նում: Հեռուից տեսնելով մօրը, նա թռաւ ձիուց
և ծնկաչոք ընկաւ նորա առաջ:

— Մայր իմ, — բացականչեց Ստեփանը. — միայն
քեզ եմ պարտական տարած յաղթութեամբ...


Այժմս միայն արի կնոջ աչքերում փայլեցին
ուրախ արտասուքներ. նրա շթունքները զոզում
էին յուզմունքից: Դորանից յետոյ հերոսը զրկա-
խառնեց իւր նորատի երջանիկ կնոջը:

— Իսկ դու, սիրելիս, ինձ ներս կը թողնէիր
— մրմնջում էր նա կնոջ ականջին:

— Ես այնպէս սիրում եմ քեզ, Ստեփան....
Ես վախենում էի, թէ քեզ բան կը պատահի...

Կնոջ խօսքերն ընդհատելով փշիւտեց բացականչեց.

— Այժմ ուժեղ էքդ սերը զէպ ինձ. բոց մօրս
սերը աւելի բարձր է զորանից....



« Ազգային գրադարան



NL0177447

